# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 1313-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

| *Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը* | *Առարկության, առաջարկության բովանդակությունը* | *Եզրակացություն* | *Կատարված փոփոխությունները* |
|---|---|---|---|
| | | | |
| ՀՀ ֆինանսների նախարարություն<br>01.02.2017թ.<br>01/82-5/1459-17 | 1. Նախագծի 1-ին կետում <<Համակարգչային ծառայություններ>> 4232 հոդվածով>> բառերը փոխարինել <<համակարգչային ծառայություններ>> հոդվածով>> բառերով<br>2. Նախագծի 2-րդ կետում <<<<N 11.1>> և <<N 12.1>> հավելվածներում>> բառերը փոխարինել <<<<N 11>> և <<N 12>> հավելվածներում>> բառերով, միաժամանակ նշված փոփոխությունները կատարել նաև Նախագծի N1 և N2 հավելվածների վերնագրերում:<br>3. Նախագծին կից հաստատվող հավելվածների ցանկում անհրաժեշտ է ավելացնել նոր հավելված, որով կսահմանվի ՀՀ ոստիկանության մասով ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N1313 –Ն որոշման N 11 հավելվածի N 12 աղյուսակում կատարվող լրացումները:<br>4. Նախագծի N1 հավելվածով ներկայացված 72261110 CPV կոդով <<ծրագրային ապահովման մշակման ծառայություններ>> գնման առարկայի ձեռքբերումն իրականացնել բանակցային ընթացակարգ գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով: | 1. Ընդունվել է:<br>2. Ընդունվել է:<br>3. Ընդունվել է:<br>4. Չի ընդունվել, քանի որ նշված խնդրի պահանջն առաջացել է չնախատեսված հանգամանքների հետևանքով և համարվում է հրատապ պայմանավորված ընթացիկ տարվա ապրիլին կայանալիք ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների անցկացման հանգամանքով: Հարկ է նշել, որ գնման գործընթացի ավարտից հետո շահող մասնակիցը պետք է իրականացնի ծրագրի | |

| | | | |
|---|---|---|---|
| | | ներդրման, ուսուցման և կատարման աշխատանքներ, որը կառաջացնի լրացուցիչ ժամանակի պահանջ:<br><br>Հաշվի առնելով վերոգրյալը նշված գնման առարկայի ձեռքբերումը նախատեսվել է իրականցնել <<ԲԸԱՀ>> գնման ընթացակարգով, ՀՀ կառավարության 10.20.2011թ. N168-Ն որոշման 25-րդ կետի 6-րդ ենթակետի գ. մասի պահանջի համաձայն: | |
| ՀՀ արդարադատության նախարարություն 14.02.2017թ. 01/14/2100 | Նախագծի վերնագիրն անհրաժեշտ է համապատասխանեցնել նախագծի 2-րդ կետին, մասնավորապես՝ վերնագրից անհրաժեշտ է հանել «փոփոխություններ և» բառերը, քանի որ նախագծում կատարվում են միայն լրացումներ: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ «Իրավական ակտերի մասին» Հի օրենքի 40-րդ հոդվածի պահանջները: | Առաջարկությունն չի ընդունվել, քանի որ նախագծի 1-ին կետով նախատեսվում է փոփոխություն կատարել ՀՀ կառավարության 29.12.016թ. թիվ 1313-Ն որոշման մեջ, մասնավորապես բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «համակարգչային ծառայություններ» հոդվածով ՀՀ ոստիկանությանը 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին առաջին եռամսյակում հատկացնելով 3000,0 հազ. դրամ: | |

**ՀՀ ոստիկանություն**